



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. փետրվարին /վերլուծություն/

2009թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10291 գործարքներ, որոնց քանակը 2008թ. փետրվարի համեմատ նվազել է 19.4%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ աճել՝ 41.4%-ով:

2009թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2752 օտարման գործարքների 72.1%-ը կազմել են առուվաճառքները, 26.7%-ը՝ նվիրատվությունները և 1.2%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.4%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. փետրվարին, 2009թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 21.4%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել՝ 38.9%-ով:

2009թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. փետրվարին, 2009թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 48.0%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել՝ 43.9%-ով:

2009թ. փետրվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2008թ.	փետրվար 2009թ.	հունվար 2009թ.
Կենտրոն	476100	482300	499800
Արաբկիր	387800	344400	362100
Քանաքեռ-Զեյթուն	299200	270200	282300
Նոր-Նորք	259400	241200	254300
Ավան	262100	241800	259100
Էրեբունի	261500	256600	270200
Շենգավիթ	270700	237300	260500
Դավթաշեն	278300	268400	288200
Աջափնյակ	263100	238700	246200
Մալաթիա-Սեբաստիա	256000	230600	238100
Նուբարաշեն	146700	148000	152600
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>287400</b>	<b>269000</b>	<b>283000</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. փետրվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հունվարի համեմատ նվազել են 4.9%-ով:

2009թ. փետրվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 257 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. հունվարի համեմատ աճել է 30.5%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել՝ 40.1%-ով:

2009թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2008թ.	փետրվար 2009թ.	հունվար 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	116500	135400	143000
	Ապարան	31100	36600	37000

	Թային	40600	46800	48200
Արարատ	Արտաշատ	91400	89800	97100
	Մասիս	118700	151000	146600
	Վեդի	76700	87100	88400
	Արարատ	58700	77600	78500
Արմավիր	Վաղարշապատ	154800	167700	163300
	Արմավիր	114400	111100	112000
	Մեծամոր	72100	79400	88800
Գեղարքունիք	Սևան	79400	91900	102600
	Գավառ	42300	50500	51100
	Մարտունի	63900	75200	73300
	Վարդենիս	29400	33500	33500
	Ճամբարակ	15700	17300	17300
Լոռի	Վանաձոր	82200	93500	102700
	Ստեփանավան	44400	51200	52300
	Մայիսակ	59400	64400	65400
	Ալավերդի	28000	34100	33200
	Տաշիր	29400	34200	33500
	Թումանյան	5500	5800	5600
	Շամլուղ	3200	3200	3200
	Ախթալա	12700	13300	13000
Կոտայք	Աբովյան	158000	134700	159800
	Նոր Հաճն	114100	123300	134200
	Բյուրեղավան	88100	104500	106000
	Եղվարդ	106700	120300	121500
	Հրազդան	60000	67000	75400
	Ծաղկաձոր	136000	172500	172500
	Չարենցավան	79500	97500	97700
Շիրակ	Գյումրի	88100	113100	120700
	Արթիկ	53000	65800	64600
	Մարալիկ	26100	30700	30700
Սյունիք	Գորիս	93200	116700	114600
	Կապան	82600	97000	102700
	Միսիան	65400	88500	88500
	Մեղրի	44200	53100	52200
	Ագարակ	28600	31400	31400
	Քաջարան	43100	51900	55800
	Դաստակերտ	7000	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	69900	82200	83800
	Եղեգնաձոր	88900	104500	106400
	Զերմուկ	123200	125000	145300
Տավուշ	Դիլիջան	82600	89100	106000
	Իջևան	114800	150300	152100
	Բերդ	37500	39800	40600
	Նոյեմբերյան	29800	31200	31200
	Այրում	21000	21100	21100

2009թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հունվարի համեմատ նվազել են 3.7%-ով:

2009թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 304 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 65, մյուս մարզերում միասին վերցրած՝ 239: 2009թ. փետրվարին, 2009թ. հունվարի

համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 7.8%-ով, ընդ որում Երևանում՝ 35.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 2.1%-ով: 2008թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 38.0%-ով, ընդ որում Երևանում՝ 38.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 37.8%-ով:

2009թ. փետրվարին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2008թ.	փետրվար 2009թ.	հունվար 2009թ.
Կենտրոն	486100	492000	510000
Արաբկիր	395300	400700	426700
Քանաքեռ Զեյթուն	307700	304900	322900
Նորք Մարաշ	266300	299100	314100
Ավան	267000	277200	286200
Էրեբունի	266600	283500	291500
Շենգավիթ	273700	276700	291900
Դավթաշեն	288200	310000	324500
Աջափնյակ	268700	275700	292400
Մալաթիա-Սեբաստիա	265900	272000	287200
Նուբարաշեն	150300	162800	172300
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>294200</b>	<b>305000</b>	<b>320000</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. փետրվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հունվարի համեմատ նվազել են 4.7%-ով:

2009թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2008թ.	փետրվար 2009թ.	հունվար 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	118600	143600	145400
	Ապարան	34400	38900	38900
	Թալին	43900	48900	49000
Արարատ	Արտաշատ	97400	103900	108000
	Մասիս	123400	153400	148800
	Վեդի	80300	90400	91900
	Արարատ	63800	79200	79200

Արմավիր	Վաղարշապատ	157300	174200	177000
	Արմավիր	117000	121100	128100
Գեղարքունիք	Սևան	81400	103100	107500
	Գավառ	44800	56500	56000
	Մարտունի	66900	78200	78200
	Վարդենիս	31700	37700	37500
	Ճամբարակ	19300	22300	22000
Լոռի	Վանաձոր	88100	105800	110200
	Ստեփանավան	49100	54600	54600
	Սպիտակ	63100	67500	68000
	Ալավերդի	30600	37100	36800
	Տաշիր	32700	38400	38200
	Թումանյան	9300	10400	10400
	Շամլուղ	6300	7400	7400
	Ախթալա	15700	16200	16200
Կոտայք	Աբովյան	163800	175400	185200
	Նոր Հաճն	120400	142500	145100
	Բյուրեղավան	92300	118700	122200
	Եղվարդ	111500	132200	133700
	Հրազդան	64900	78300	81500
	Ծաղկաձոր	200200	276000	276000
	Չարենցավան	81400	100400	104400
Շիրակ	Գյումրի	93500	124200	125900
	Արթիկ	55000	65800	65800
	Սարալիկ	29900	32700	32700
Սյունիք	Գորիս	95300	126400	127000
	Կապան	85400	109900	112400
	Սիսիան	67600	90400	91100
	Մեղրի	47900	53800	53800
	Ագարակ	30800	33400	33400
	Դաստակերտ	10100	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	74700	87500	87700
	Եղեգնաձոր	95500	110800	111800
	Ջերմուկ	70500	103500	103500
Տավուշ	Դիլիջան	86600	115900	115600
	Իջևան	116200	153000	154200
	Բերդ	39800	42600	42600
	Նոյեմբերյան	35000	35500	36700
	Այրում	22800	23000	23000

2009թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հունվարի համեմատ նվազել են 1.4 % -ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 927 միավոր /616.64 հա/ հողեր, որից Երևանում` 48 միավոր /2.85 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 31 միավոր /4.17 հա/ հողեր, որից Երևանում` 14 միավոր /0.74 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 474 միավոր /557.74 հա/, որից Երևանում` 1 միավոր /0.05 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 344 միավոր /33.48 հա/, որից Երևանում` 32 միավոր /1.89 հա/,

- հասարակական կառուցապատման հողեր՝ 96 միավոր /17.29 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /0.91 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 10 միավոր /7.30 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 2 միավոր /0.13 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.70 հա/:

2009թ. փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 776 միավորի /505.48 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 38 միավոր /1.93 հա/, նվիրատվության գործարքներ՝ 134 միավորի /98.57 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /0.66 հա/ և փոխանակության գործարքներ՝ 17 միավորի /12.59 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.26 հա/:

Հանրապետությունում 2009թ. փետրվարին, 2008թ. փետրվարի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 54.8%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 49.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 58.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 9.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 191.55 հա, որից 184.04 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 18.8%-ը կամ 146 գործարքներ /120.52 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 18 գործարքներ /0.48 հա/, իսկ 79.4%-ը կամ 616 միավորը /363.52 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 20 միավոր /1.45 հա/:

2009թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 14 գործարք /21.44 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	7	0.16	11	0.32	1	0.05	0	0.00	17	1.29	2	0.11
Արագածոտն	9	7.06	0	0.00	1	0.01	1	1.85	32	25.74	0	0.00	20	2.30	1	0.06
Արարատ	3	5.56	0	0.00	7	0.88	5	0.17	71	22.50	2	5.60	42	3.68	3	0.02
Արմավիր	6	5.32	1	0.18	1	0.06	10	1.29	84	178.72	0	0.00	50	5.83	2	0.15
Գեղարքունիք	3	31.50	0	0.00	0	0.00	1	0.15	11	7.84	0	0.00	18	2.29	4	0.23
Լոռի	5	2.17	1	0.15	0	0.00	7	0.06	14	8.93	3	0.43	23	2.45	8	0.33
Կոտայք	12	51.92	0	0.00	4	0.46	6	0.06	57	18.50	0	0.00	52	4.59	5	0.46
Շիրակ	0	0.00	2	0.90	10	0.35	6	0.22	40	56.33	0	0.00	10	1.28	2	0.02
Սյունիք	1	4.73	0	0.00	0	0.00	1	0.35	6	3.70	0	0.00	4	0.34	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	8	0.88	3	0.04	5	4.14	0	0.00	3	0.35	3	0.19

Տավուշ	2	3.00	1	0.05	8	0.56	2	0.05	15	4.58	0	0.00	4	0.47	2	0.004
Ընդամենը	41	111.26	5	1.28	46	3.36	53	4.56	336	331.03	5	6.03	243	24.87	32	1.57

Ստորև ներկայացվում է 2009թ. փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողերի.

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	16	0.43	0	0.00	6	0.13	10	0.30	2	0.05	0	0.00	0	0.00	1	0.03	1	0.02
Արագածոտն	2	1.86	0	0.00	1	0.01	1	1.85	9	7.06	9	7.06	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	5	0.17	0	0.00	0	0.00	5	0.17	10	6.44	3	5.56	0	0.00	7	0.88	0	0.00
Արմավիր	2	0.58	0	0.00	1	0.06	1	0.52	11	1.29	1	0.34	1	0.18	0	0.00	9	0.77
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	4	31.65	3	31.50	0	0.00	0	0.00	1	0.15
Լոռի	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	11	2.24	4	2.03	1	0.15	0	0.00	6	0.06
Կոտայք	2	0.021	0	0.00	1	0.02	1	0.001	20	52.42	12	51.92	0	0.00	3	0.44	5	0.06
Շիրակ	5	0.43	1	0.35	0	0.00	4	0.08	13	1.04	0	0.00	1	0.55	10	0.35	2	0.14
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	5.08	1	4.73	0	0.00	0	0.00	1	0.35
Վայոց Ձոր	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	10	0.92	0	0.00	0	0.00	8	0.88	2	0.04
Տավուշ	6	0.15	1	0.05	4	0.06	1	0.04	7	3.51	2	3.00	0	0.00	4	0.50	1	0.01
Ընդամենը	40	3.65	2	0.40	13	0.28	25	2.97	99	111.70	35	106.14	3	0.88	33	3.08	28	1.60

Հանրապետությունում 2009թ. փետրվարին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք /5.12 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. փետրվարին, 2008թ. փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 83.2%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 90.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 83.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 81.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 80.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 86.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. փետրվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	8	6.96	44.3	410.5	193.8	22	10.14	365.0	12000.0	4086.5
Ապարան						1	0.50	86.5	2727.3	490.2
Թալին						3	4.28	93.6	5494.5	501.0
Ծաղկահովիտ	1	0.10	7000.0	7000.0	7000.0	6	10.83	79.5	1000.0	220.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	5.46	69.5	95.7	82.6	22	7.25	335.1	10833.3	2002.9
Մասիս	1	0.11	289.0	289.0	289.0	6	2.31	200.0	11904.8	2776.7
Վեդի						37	12.32	207.0	10795.1	1807.4
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						42	34.70	294.3	9090.0	1110.4
Բաղրամյան						13	129.08	90.6	2561.1	650.6
Վաղարշապատ	1	0.34	44.1	44.1	44.1	29	14.94	444.4	11764.7	2435.8
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	0.31	199.8	1875.0	448.5
Ճամբարակ	3	31.50	148.3	352.7	216.4	7	7.15	60.5	953.3	210.3
Մարտունի						1	0.08	51.1	2850.0	533.8
Սևան								52.2	2134.8	212.5
Վարդենիս						1	0.30	41.2	2575.1	352.8
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի								170.4	6424.2	1080.0
Գուգարք	3	1.18	112.7	400.2	304.1	10	4.61	234.6	6065.9	1068.8
Սպիտակ								250.0	5555.5	575.3
Ստեփանավան	1	0.85	728.6	728.6	728.6	1	1.31	90.6	1686.6	415.8
Տաշիր						3	3.01	45.3	1384.4	218.2
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	11	51.41	45.8	623.1	231.1	24	5.02	279.3	11942.7	4745.1
Եղվարդ	1	0.51	126.3	126.3	126.3	26	11.50	174.4	11971.8	3335.2
Հրազդան						7	1.99	130.5	10256.4	1365.8
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						6	4.39	252.0	1693.1	485.5
Ամասիա						1	5.16	40.9	261.0	130.8
Անի						2	1.95	110.6	546.9	287.8
Աշոցք						7	39.23	58.5	215.8	124.5
Արթիկ						24	5.60	79.4	1428.6	205.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						2	2.30	92.6	1023.2	422.2
Կապան	1	4.73	230.3	230.3	230.3			120.0	841.6	258.8
Մեղրի								193.0	3000.0	554.8
Սիսիան						4	1.40	46.3	1977.4	292.1
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր								125.0	10000.0	1430.2
Վայք						5	4.14	58.8	1430.7	520.2
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						7	1.67	213.3	3783.8	452.8
Իջևան	2	3.00	303.6	2442.0	1372.8	2	0.33	267.5	9454.5	948.2
Նոյեմբերյան						6	2.58	46.7	7368.4	695.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:



Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. փետրվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						19	18657.0	130.7	22200.0	2574.0
Ապարան								124.1	609.6	232.0
Թային						1	4360.0	63.2	1454.8	122.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	75.1
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	7	8789.0	150.0	542.0	348.6	10	10160.0	173.9	7140.3	927.0
Մասիս						16	10510.0	187.5	25000.0	1221.0
Վեդի						16	16105.0	126.1	5000.0	680.4
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						26	32698.0	131.6	9090.9	1220.0
Բաղրամյան								100.0	833.3	161.1
Վաղարշապատ						24	25555.0	197.4	26528.4	1560.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	1920.0	186.6	1084.3	418.8
Ճամբարակ						2	1700.0	71.3	2286.2	117.2
Մարտունի						12	16370.0	119.3	5000.0	272.8
Սևան						2	2900.0	240.0	3110.4	193.0
Վարդենիս								72.5	987.2	140.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						2	1960.0	114.3	1388.9	165.5
Գուգարք						13	12751.0	77.9	14083.3	665.8
Սյիխակ						4	4210.0	104.9	1348.3	160.1
Ստեփանավան						3	3490.0	88.2	1666.7	127.8
Տաշիր						1	2100.0	45.3	400.0	74.8
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	3	4440.0	406.3	1742.0	852.2	20	14016.0	264.5	35353.5	2090.2
Եղվարդ						29	26939.0	173.6	27000.0	2480.5
Հրազդան						3	4930.0	117.7	34848.5	1355.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	6	1920.0	1500.0	5000.0	3147.8	5	5698.0	113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	1200.0	362.5	362.5	362.5	1	1170.0	67.9	180.6	108.1
Աջոցք						1	3300.0	40.8	144.0	58.1
Արթիկ	1	400.0	78.8	78.8	78.8	3	2668.0	111.8	5000.0	212.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						2	1730.0	112.2	1700.0	271.5
Կապան						1	600.0	67.9	2638.9	220.0
Մեղրի						1	1080.0	68.5	632.9	137.2

Միսիան								123.5	875.0	155.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	8800.0	263.3	760.0	325.4	1	2000.0	96.7	7659.6	360.0
Վայք						2	1500.0	120.7	1448.3	138.5
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	91.5
Իջևան	4	5000.5	1428.3	1725.0	1533.6	3	2442.0	74.1	14423.1	478.7
Նոյեմբերյան						1	2230.0	125.0	1948.1	155.8

2009թ. փետրվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 21 գործարքներ 5.18 հա մակերեսով, ընդ որում 4-ը՝ /3.05 հա/ Շիրակի և 17-ը՝ /2.13 հա/ Լոռու մարզերում:

2009թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1060 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 77.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. փետրվարին 2009թ. հունվարի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 48.3%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ՝ 20.3%-ով:

2009թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 96 բնակարանների, 53 անհատական բնակելի տների, 1 այգետնակի, 539 հասարակական, 71 արտադրական նշանակության օբյեկտների, 279 միավոր /1843.32 հա/ հողերի և 21 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 12 վարձակալության գործարքների /այդ թվում 3 միավոր /0.004 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. հունվարի համեմատ նվազել է 20.0%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ՝ 57.1%-ով: 2009թ. փետրվարին հանրապետությունում վարձակալված 1843.32 հա հողերից 1.30 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1842.02 հա հողերի 12.27 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 4.50 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 1145.62 հա, որից 1101.27 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 390.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. փետրվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	6	10.33
Արարատ	0	0.00	8	10.49
Արմավիր	0	0.00	3	3.69
Գեղարքունիք	0	0.00	4	108.93
Լոռի	3	37.00	15	18.04
Կոտայք	0	0.00	3	101.91
Շիրակ	1	200.00	26	63.49
Սյունիք	3	153.79	47	947.48
Վայոց Ձոր	0	0.00	14	81.01
Տավուշ	0	0.00	1	0.02
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>390.79</b>	<b>127</b>	<b>1345.39</b>

2009թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 942 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.2%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հունվարի համեմատ աճել է 2.3 անգամ, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել՝ 54.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.7%/, առանձնատների /22.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.4%/ և հողերի /14.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 433 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հունվարի համեմատ աճել է 95.9%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել՝ 39.4%-ով:

2009թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 220.83 հա հողեր, որից 5.16 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 94.7%-ը կամ 209.10 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 140.84 հա, որից 139.87 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. փետրվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 39 գործարքներ, որից 26-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 74.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.8%-ն՝ անհատական բնակելի տների, 10.3%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների և 2.6%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3.0 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.4 անգամ, մյուս մարզերում՝ 6.5 անգամ, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել է 82.6%-ով, ընդ որում Երևանում՝ 81.7%-ով, մյուս մարզերում՝ 84.1%-ով:

2009թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 4 և 1 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2009թ. հունվարի համեմատ աճել է 25.0%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել՝ 50.0%-ով: 2009թ. փետրվարին

մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 3-ը՝ Գեղարքունիքի, 1-ական՝ Արագածոտնի և Տավուշի մարզերում:

2009թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1482 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. հունվարի համեմատ աճել է 27.9%-ով, իսկ 2008թ. փետրվարի համեմատ նվազել՝ 29.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.5%/:

***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***